2. Օձա կապակցումէ գոյականների եղակի սեռականի և ածականների յընակի ուղղականի հետ, բայց ծբѣ գոյականների և ածականների յընակի ուղղականի հետ, զոր օրինակ, ծба старшіе брата, երկրքին երէց եղբարքը. ծбѣ младшіе сестры. երկրքին կրտսեր քոյրերը. — Двоѣ, трѣѣ, чѣтвѣро և միւսերը պահանջումն յըն. սեռական խնդիր և գործ են անձնաւորական անունների մէջ, մանաւանդ արակ. և իրական սեռի. զոր. օրին. քնտերօ քաշտիկօք, բաղմութիւն հինգ մշակների. տրѣѣ дѣтей, երեք երեխայք (մի գերդաստանի): Բայց միայնակ յընականների մէջ (§ 12, ծանօթ. 4) գործածական են ծбон, двѡи, трѡи և միւսերը որ գրվումն ուղղականի հետ. զոր օրին. трѡи сѣтки, 3 անգամ 24 ժամ. чѣтвѣры часы, չորս հատ ժամացոյցք \*): Սակայն միայնակ յընականների հետ կապակցումն նոյնպէս հասարական թուանումը օբ և րօ վերջաւորութեամբ. վասն որոյ ասվումէ նոյնպէս տրѣѣ сѣтокъ, чѣтвѣро часовъ.

XXIX. Անդիր ուսանելի բառեր և առաջարկութիւնք վասն թարգմանութեան.

черепица ,	կղմինար	пудъ ,	պուղ
солѡма ,	յարդ	штѣка ,	հատ
саши ,	էի (յըն. միայն) սահնակ.	стѣнноѡй, ая, ѡе,	պատի

\* Давыдовъ: Опытъ Общесравнительной Гр. Русскаго языка.

почѡйка,	նորոգութիւն	карманнаѡй, ая, ѡе, գրպանի
ворѡта, և ворѡта, т., (միայն յըն.	չէգ.) զարպաս,	
часовниѡкъ,	ժամագործ	нѣжнѡй, կարեօր, հարկաւօր
голубъ, а,	ազանի	нѣжно (на что-нибудь), կարեօր (սա. ինչ)
плодъ ,	պատու	стѡитъ, արժէ
		особенно, առանձինն.

Изъ десяти учениковъ трѣтѣей скамейки иѣтеро прилѣжны, двое весьма лѣнивы. — Учитель хвалитъ ещѣ тройчѣхъ учениковъ чѣтвѣртой скамейки. — Семѣро работниѡковъ работаютъ на нашемъ дворѣ ужѣ чѣтвѣро сѣтокъ. — На улицѣ видны двѣ чѣтвѣрки лошадей и трѡи сани. — На обѡихъ ѡкнахъ лежалѡ разные плоды пятками и десятками. — Разсказываютъ, что дѡикѡ голубѡ, особенно въ Америкѣ, летаютъ сотнями и тысячами. — У меня три десятка ѡблоковъ, а у ней пять десятковъ грунѣ. — Сколько стѡитъ эта дѡюшка голубѡй? — У часовника было шѣстеро стѣнныхъ и десѣтеро карманнаѡхъ часовъ.

Երկրքին եղբարքը և երկրքին քոյրերը յածախումնն ղէպի ուսումնաբան. — Տանիքի նորոգութեան համար հարկաւօր են երկու հարիւրեակ կըզմինար (սեռ.) և վեց պուղ յարդ (սեռ.). — Այս զոյգ ձիերը արժէն ինձ 180 ուրբի արծ. (գործ.). — Բռնեցէք զիրքը երկրքին ձեռքով. — Ահա երկու ակնոցը առանց ապակիների. — Մի զիւժինի մէջ կան տասներկու հատ. — Ամրոցը ունէր եօթն մեծ զարպասներ. — Մի ժամացոյցի նորոգութիւն արժէ ինձ աւելի քան թէ երկու պատի-ժամացոյց.

§ 34. IV Կոտորակային թուականը (числительныя дробныя)

1. Գործա են. половина, կիսամասն, կէսը. треть (սեռ. и), երորդամասը, чѣтвѣрть, и, քաւորդ, седмина, եօթնամասը, осемѣха ութամասը: Սորա հորովումնն և գործ են անձնաւոր գոյականը, միւս կոտորակային թուանունները են համապատասխանութիւնը. զոր օրին. 1/3 — одна пятая-այսինքն օբ, 2/3 — две пятыхъ (չորտթեամբ հասկացվ. частѡ). 2/7 — две седмихъ; 11/23 — одинадцать двадцать пятыхъ (այսինքն օբ), և այլն.

2. Половина, ինչպէս ասուեցաւ վերեւում, նշանակումէ կիսամասն, կէս (զոյ. անուն). իսկ 1/2, ածականի մտքով, ուսու լրովում բայցայցալուսմէ ձայնովս пол, կապակցած գոյականի եղակի սեռականի հետ. ուստի 1/2 — քաւորդ ասվումէ полубла, կէս բողէ, полминуты: Նոյնպէս ևս полтора

(արակ. և չէզ.) նշանակում է մի և կէս, և է իսկապէս համառօտութիւնը  
половина второго. полторы (իզ.), համառօտութիւնը половина второй.

Այս բառերի հարմարութիւնը լինում է այսպէս.

	<b>Եզակի.</b>		<b>Եզակի.</b>
Ուզզ.	полрубля, կէս ուսրլի	полминуты, կէս րոպէ	
Սեռ.	полурубля	полуминуты	
Տրակ.	полурублё	полминуты	
Հայց.	полрубля	полминуты	
Պործ.	полурублёмъ	полуминутую	
Նախ.	о полурублѣ	о полуминутѣ	
	<b>Յարնակի.</b>		<b>Յարնակի.</b>
Ուզզ.	полурубля, կէս ուսրլիներ	полуминуты, կէս րոպէներ	
Սեռ.	полурублѣй	полуминутъ	
Տրակ.	полурублямъ	полуминутамъ	
Հայց.	полурубля	полуминуты	
Պործ.	полурублями	полуминутами	
Նախ.	о полурублѣхъ	о полуминутахъ	

	<b>Եզակի.</b>		<b>Յոգնակի</b>
	<b>արակ. և չէզզ.</b>	<b>իզ.</b>	
Ուզզ.	полтора	полторы	полторы, մի և կէսեր
Սեռ.	полтора	полторы	полторыхъ
Տրակ.	полтору	полторы	полторымъ
Հայց.	полтора	полторы	полторы
Պործ.	полторымъ	полторою	полторыми
Նախ.	о полторы	о полторы	о полторыхъ.

Երանօթ. Полднй, կէս օր, полдни, կէս գիշեր, պիտոյ չէ շփոթել полдень  
(միջօրեայ), полночь (մէջ գիշերի) բառերի հետ, որոց հարմարութիւնը  
յետոյ (§ 36, 4, է) կը սուսանուի: полу ձայնի հետ բազազրած  
բառերը, զոր օրինակ, полукругъ, կիսաշրջանակ, полуостровъ,  
թերակղզի, չեն սուսանում իրեանց հարմարան մէջ ոչինչ իս-  
տորումն:

3. Полтора, полторы (որպէս два, три) կապակցութեամբ գոյականների  
եզակի սեռականի հետ, իսկ անականները որպէս և գերանունները  
գրվում են նոցա հետ, ինչպէս բոլոր, пол ձայնի (և սեռականի)  
հետ կապակցած բառերի մէջ, յարնակի թուով. զոր օրինակ,

это полтора блока, այս մին ու կէս խնձորը. քէմե полтора, մի  
ամբողջ կէս տարի.

XXX. Անգիր սերտելի բառեր և առաջարկութիւնք վասն  
թարգմանութեան.

фундаментъ ,	հիմք	отвѣтъ ,	պատասխան,
постройка ,	շինութիւն	примѣръ ,	օրինակ
дверь, и,	դուռն	на-примѣръ, զոր	օրինակ
дорога ,	ճանապարհ	железный ,	կրկաթի
сукино ,	չուխա, մահուգ	железная дорога, կրկաթուղի	
цѣна ,	զին	отъ-роду ,	ի ծնէ
аршинъ ,	արշին (յորն. սեռ.)	красный ,	կարմիր
	аршинъ, փոխան. аршиновъ)	зеленый ,	կանաչ
фунтъ ,	ֆունտ	слабующий ,	յետադայ, յաջորդ
классъ ,	դասատուն, կարգ.	состоятъ ,	(ներկայ состою, փն) կայա-
вопросъ ,	խնդիր, հարց,		նախ, բազկանալ, կալ.
отвѣчать ,	(1. լծորդ. ներկայ օյ)	вмѣстѣ ,	(մակրայ) միասին, միան-
проѣзжать ,	(1. լծորդ. ներկայ օյ) ճանապարհորդելով անցանել, շրջիլ		զամայն
		вообщѣ ,	(մակրայ) առ հասարակ
		по (նախադր. արակ. խնդրով) կրկայ-	նութեամբ (մի բանի).

Բազազրածեան կանոն.— Հասակը սուսական լեզվում նշանակվում է  
կամ սեռ. հարմար, ինչպէս հին հայկականում. զոր օրին. онъ пятнадцать лѣтъ,  
նա հնգետասան ամաց է, տասն և հինգ տարեկան է. կամ թէ արակա-  
նովը անձնի և ուղղականովը տարիների քանակութեան կապակցութեամբ есть,  
(было, будетъ) օժանդակ բայի հետ, ուր օտъ-роду (ի ծնէ) կամ յաւելա-  
ցնվում է կամ թէ իմացվում է զորութեամբ. զոր օրին. тебѣ (есть) пятнадцать  
лѣтъ օտъ-роду, դու տասն և հինգ տարեկան ես. твоей сестрѣ было семнадцать  
лѣтъ, քո քոյրը տասն և եօթն տարեկան էր:

Ваши двѣри состоятъ изъ двухъ половинокъ.— Три четверти аршина этого  
краснаго сукина стѣять два рубля; зеленое сукино не такъ дорого, потому что  
аршинъ его стѣють только полтора рубля.— Постройка одного фундамента за-  
нимаетъ двѣ трети работникова.— Но железной дорогѣ мы проѣзжали въ часъ  
четыре мили съ половиною.— Мне скоро будетъ двѣнадцать два года и двѣ трети,  
женѣ его только восемнадцать лѣтъ; но сколько лѣтъ твоему брату? Домъ пріятеля

твоего лежигъ въ полуверстѣ отъ нашего.—Подороги мы проѣздаемъ вмѣстѣ.—Пять фунтовъ составляютъ осемьху пуда.—Двадцать копеекъ равны одной пятой рубля, а шестьдесятъ копеекъ трѣмъ пятымъ рубля.—Двѣ седмьхъ мѣли мы называемъ двумя верстами, но сколько верстъ содержатъ въ себѣ полторы мѣли?—Который часть?—Четверть перваго—половина четвертаго—три четверти шестаго—сорокъ восемь минутъ десятаго.—скоро дѣвать часовъ.

Քանի ամիս ունի կէս տարին, իսկ երրորդ մասը տարու.—Քանի ամիսներ բաղկացնումեն 1 1/2 տարի.—Իսկ 1/6 տարին.—2/3 ամիսը կացուցանումեն 20 օր.—Այն տեղ զրած են 5 3/4 արշին լաւ մահուղ (սեռ.) և 1 1/2 արշին կարմիր մահուղից.—Մեր քաղաքից մինչև դեարը 1 1/2 վերստ են.—այս դարպասից մինչև ծովը 1/2 վերստ է.—Շուտով (скоро) կը լինի կէսը իններորդ ժամու.—Տասներորդ ժամու երկք քառորդում (ե՛ն հայց. խնդրով) ևս կը լինիմ ասնը.—Մահուղի զինը շատ դանաղան է. անո՞ զօր օրին. մի արշին լաւ կանաչ մահուղ արծէ 2 2/3 ուռլի, իսկ կէս արշին կարմիրց 1 3/4 ուռլի.—Իմ ուսուցիչս 30 տարեկան է. Նա (իգ.) էր մօտ 28 տարեկան.—Քա կըբայրը շուտով 23 տարեկան լինի.—Որո՞ց կինը 48 տարեկան էր.—Իրուստտանը վախումէ իւր մէջ Եւրոպայի կէսը և Ասիայի երրորդ մասը:

Պատասխանիր ինձ յետադայ հարցմունքիս. Մի սենեկում կան երկք սեղանք. մինի վերայ զրած են 22 տանձ, 23 խնձոր և 40 կեռաս, միսի վերայ—8 տանձ, 16 խնձոր և 23 կեռաս. երրորդի վերայ միայն 6 տանձ և 2 խնձոր և մի զիւժին կեռաս. որքան պտուղք առ հասարակ կան սենեկի մէջ.—Մեր գաստանում կան 5 սեղանք, իւրաքանչիւր սեղան ունի մի նրստարան. առաջին 4 նստարաններից ամեն մինի վերայ նստած են 10 աշակերտք, իսկ հինգերորդի վերայ միայն 7. որքան աշակերտք կան դաստանում.—Այս 47 աշակերտների կարգին պատկանումեն այլ ևս 46 աշակերտք միւս դաստան. որքան աշակերտք առ հասարակ յաճախումեն այժմ դէպ ի մեր ուսումնարանը.—Ո՞րքան հաս պարունակումեն երկու զիւժին.—Իսկ կէս զիւժինը.—Ո՞րքան կօպեկ կան 1/3 ուռլիում մէջ.—Մի օրը քանիերորդ (котдрымъ) մասն է մի տարու.—Իսկ մի ամսու.—Ո՞րքան ֆունտ կայ 1/10 պուղի մէջ.—Ո՞րքան վերստ է 1/7 մղոնը. որքան վերստ պարունակումէ կէս մղոնը.—Մի մարդ 66 տարեկան է. քանի տարի բովանդակումէ նորա կէս հասակը.—Քանի տարեկան ևս դու.—Քանի տարեկան է նա (իգ.)—Քանի ժամք են (կամ թէ քանիերորդ ժամն է) այժմ.—Եթէ մշակները աշխատումեն 4 օր և 5 զիւշեր, քանի անգամ 24 ժամ է այդ.—Ուր ունիս

մի սահնակ, քո բարեկամը ունի երկու. քանի սահնակներ ունիք դուք երկրինդ միանգամայն.

Իններորդ գլուխ.

§ 35. Համառօտ տեսութիւն նախադրութիւնների.

1. Սեռական խնդիր պահանջումեն безъ, առանց. для, վասն. до, մինչև. изъ, отъ (հին լեզուի նախադրութիւնը է կամ : ձայնաւորների առաջև, բացառական խնդրով, որ նոր լեզվում բայայայտվումէ միայն բացառականով էլ վերջաւորութեամբ. ради, վասն, յաղաղս. ց, մօտ, մերձ. изъ-за (յեանակողմից). изъ-подъ (տակից, մօտից).

Այլև գործ են ածվում իբրև նախադրութիւնք սեռական հարվով յետադայ մակրայքս (նախադրական մակրայք—предложныя нарѣчія).

близъ ,	մօտ, մերձ	около ,	շուրջ, շուրջանակի
вдоль ,	երկայնութեամբ	позади ,	յետս կոյս
вмѣсто ,	փոխանակ	послѣ ,	յետ, յետոյ
внутри ,	ներսում	посредствомъ ,	միջնորդով, ձեռամբ
внѣ ,	արտաքոյ	прежде ,	յառաջ քան
вотлѣ ,	կից, մօտ	противъ ,	ընդդէմ, դէմուդէմ
подошъ ,	աւրնթիբ	напротивъ ,	հանդէպ
срѣзъ ,	բայ ի	повѣрхъ ,	վերեւում
мимо ,	մօտից քերելով	сверхъ ,	բայ ի, դորա վերայ

среди ի մէջ, միջում.

2. Տրական խնդիր պահանջումեն къ, առ, և մակրայս вопреки, ընդդէմ, հակառակ.

3. Հայց. խնդիր պահանջումեն чрезъ (черезъ) ընդ (միջով, վերայով), сквозъ, միջից (մէջ տեղից դէպ ի դուրս), про, մասին, վասն.

4. Գործիակ. խնդիր աւանումեն надъ, ի վերայ. между, ի մէջ. Ծանօթ. между կապակցվումէ նոյնպէս սեռականի հետ.

5. Նախադր. խնդիր—при, աւրնթիբ, մօտ.  
6. Հայց. և Գործ.—за, յետս կոյս. подъ, ի ներքոյ. предъ (передъ) առաջև, առաջի.

7. Հայց. և Նախադր.—въ զինի հարցմանս դէպ ի ուր և հարցմանս որ տեղում. на, ի վերայ. о (объ), ի մասին, վերայ.

8. Սեռ, Հայց. և Գործ.—*Съ (սեռ. խնդրով, երբ որ նշանակումէ շար- ժողովին վերելից կամ ներքելից. Հայց. խնդրով, երբ ցուցանումէ հաւա- տարովին. Գործ. խնդրով, երբ նշանակումէ հանդէս, ընկերակցութիւն.*

9. Տրակ. Հայց. և Նախադր. ու արականով, նշանակութեամբս ըստ, պարտաւոր. հայցականով, երբ նշանակումէ քնն. նախադրականով, երբ նշա- նակումէ քնն. քնն.

Ծանօթ. 1. Չկնի նախադրութիւններն չա, սոմ, սրեմ, եմ, սա, զկնի հարցմանս քէդ է սոմ (կու՞մ?), զրվումէ հայցում. զկնի հարցմանս սոմ (է՞մ?), առաջին երեքը կազակցութեան գործիականի հետ, իսկ երկու վերջերքը նախադրականի հետ.

Ծանօթ. 2. Բազմապիստ վերջացած նախադրութիւնքը շատ անգամ տառս է յեղատիտեան դէպ ի օ այնպիսի բառերի առաջն, որ սկսու- մեն երկու բազմապիստով, զոր օր. во мнѣ (իմ մէջ), во дворѣ, դէպ ի գաւիթը. Օգն նախադրութեան վերայ տես ծանօթութիւնը X. Երես 63.

XXXI. Անդիր ուսանելի բառեր և առաջարկութիւնք վանն թարգմանութեան.

Богъ ,	Աստուած	милость, и,	ողորմութիւն
божій, ія, іе,	Աստուծայ	власть, и,	իշխանութիւն
защита ,	պաշտպանութիւն	окончаніе ,	վերջացոցանելը
непогода ,	խոչոր եղանակ	показываться, երևել,	ցուցանել զինքը
мѣсяць ,	լուսին	уповать ,	սարախնել
звѣзда ,	աստղ	отдыхать ,	հանգստանալ, շունչ առնուլ
гора ,	սար, լեռան		
доска ,	տախտակ	опять ,	զարձեալ.

Ծանօթ. Божій (ія, іе) այն բանով է խոստովում ինչ եմ, եւ վերջապարտած ազգական անականների հոլովմանից, որ նա փոխանակ է, հոլովական վերջապարտութիւնների մէջ ընդունում է ի նշագէս արդէն ուղղականի մէջ, բայց կզակի սեռ. և տրակ. մէջ արակ. և չէ- զոր սեռում շատ անգամ գործ է անվում վերջապարտութեամբս ія, ію (փոխանակ іаго, іему).

Малыши бѣгаютъ въ садъ и за домъ.—Ученики играютъ за домомъ.— Бѣшка смѣтрить на голубей изъ-подъ ворѳты.—Мы смѣтримъ сквозь стекло.— Говорить не про васъ.—Послѣ непогоды изъ-за облакъ (այլ և яблаковъ) по-

казывались опятъ мѣсяць и звѣзды.—Большіе города лежатъ обыкновенно у большіихъ рѣкъ и при моряхъ.—По окончаніи работъ люди отдыхаютъ въ домахъ своихъ.—Изъ одного города въ другой чрезъ рѣки и горы теперь во многихъ земляхъ профѣзжаютъ по желѣзнымъ дорогамъ.—Съ первой минуты нашей жизни по самую смерть нашу хранитъ насъ милость Божія.—Въ словѣ Божіемъ мы чтѣемъ о долге нашемъ къ бѣдному.—Наша судьба во власти Божіей.—Хвалите дѣла Божія и уповайте на Божію милость!

Մարդիկ շինումեն իւրեանց սուներ վանն (для պաշտպանութեան խոչոր եղանակի և վայրենի դադանների երեսից.—Տուները են քարեայ և փայտեայ և բազմապիստեան զանազան մասներից, զոր օրինակ, հիմանից, պատերից (որմերից), տանիքից. սնների ներսում են սննեակքը.—Հիմնը շինումեն կէս մի հողի մէջ և կէս մի նորա վերայ.—Որմերի մէջ կան դուռներ և լուսամուտներ.—Տանիքները ծածկումեն քաղաքներում սովորաբար կղմինարներով և երկաթի թերթերով, իսկ զիւղերի մէջ յարգով և տախտակներով.—Մի շատ կամ սակաւ (болѣе, или менѣе) ընդարձակ գաւիթը զրած է զրեթէ յետ կոյս իւրաքանչիւր, մանաւանդ մեծ տան, և սակաւ է պատահում (нерѣдко), որ շրջապատէին զայն գեղեցիկ այգիներ.—Ըստ հարստութեան բնակիչների շատ զանազան է մեծութիւնը սնների:

Թշնամիների զօրագունքը էր շատ աւելի հզօր քան թէ մեր մտածումէինք, վանն զի նա բազմապիստեան 60,000 պատերազմողներից.—Զօրավարի մեծագործութիւնքը ամենեւեան ձգեցին զարմացքի մէջ.—Քաջ պահանջող զօրքը պաշտպանումէր ամբողջ մօտ չորս ամիս.—Մի մասանաք վտանգները, որ (զործ.) ճակատագիրը սպանումէր ձեզ.—Ուսուցչի խօսքերը ձեզ միշտ օգտակար կը լինին.—Ոչ որ հաւատում է նմա, որ է խօսում ճշմարտութիւն.—Ծոյլ մարդը սպանումէ ժամանակը նորանով, որ ժամանակը գործ է գնում օգտակար պարապմունքի վերայ.—Բաւական է, որ իւրաքանչիւրը մեղանից (изъ насъ—ի մէնջ) լցուցանէ իւր պարտականութիւնը.—Պետերբուրգը ասվումէ նոյնպէս Պետրոսի քաղաք.—Երկաթուղին Պետերբուրգից մինչև Մոսկուա վազուց արդէն պատրաստ է, և այժմ 604 վերտոր է մէջ երկրքին քաղաքների անցանումն 20 ժամ մէջ (ե՛ք հայց. խնդրով) և աւելի սակաւ (и менѣе).





բ, Ազաիկի նախադրականի մէջ, յաճախ հանդիպումնն փոխանակ է վերջաւորութիւնքս ы, ю, (չեչտով) զկնի նախադրութիւններնս въ, на (մանաւանդ այնտիսի բառերի մէջ որ նշանակումնն քեչ կամ էստէս, այլն նիւթանուններն մէջ—), զոր օր. онъ былъ у него бревномъ въ глазу, նա փուչ էր նորա աչքում. на 43 летъ году своего возраста, 43 րդ տարումը իւր հասակի. въ чуждомъ краѣ, օտար աշխարհում. վերոյիշեալ բառերի կարգին պատկա- նումնն այլ ևս սորա.

балъ ,	պարանանդէս	полъ ,	յատակ
берегъ ,	զեակզր, ծովեզր	полкъ ,	զունդ
бокъ ,	կող	раѣ ,	զրախտ
дѣготъ ,	կուպր	ротъ ,	բերան
лѣсъ ,	անտառ	садъ ,	այգի
лобъ ,	ճակատ	спѣтъ ,	ձիւն
мостъ ,	կամուրջ	чай ,	թէյ,

դ, Յարն. ուղղականը փոխանակ ы, и վերջանումէ

1, զէպ ի ъ, ѝ (չեչտով) ի մէջ բառերիս

берегъ ,	զեակզր, ծովեզր	лѣсъ ,	անտառ
бокъ ,	կողմ	островъ ,	կղզի
глазъ ,	աչք	пѣгребъ ,	զեանափոր
голосъ ,	ձայն	рогъ ,	եղջիւր
городъ ,	քաղաք	снѣгъ ,	ձիւն, ձեան բաղմութիւն
колоколъ ,	զանգակ	тѣтеревъ ,	տետրիքս (թռչուն, սպի- տակ ծառերի վերայ բնակող)
краѣ ,	եզր, աշխարհ	хлѣвъ ,	մուր անասունների
лугъ ,	մարդաբան		

ѣкоръ , խարխիս.

2, զէպ ի ѣя (սեռ. յարն. ԵՅՎ) ի մէջ բառերիս

братъ ,	եղբայր	колъ ,	ցից
брусъ ,	տաշած գերան	пѣлозъ ,	սահնակի սողախայտ
дѣверъ ,	տաղր	прутъ ,	զաւազան
клинъ ,	սեղ	студъ ,	աթոռ
кѣлосъ ,	հասկ ցորենի	чѣрешъ ,	կոխ, ստեղն.

Բայ ի զոցանից, կերպաւորումն իւրեանց յարնակին

сукъ ,	սոս,	прѣтъ ,	սչնի
клокъ ,	փունջ	„	կժոչնի
князь ,	իշխան	„	князьн
другъ ,	բարեկամ	„	друзьн
кумъ ,	սանահայր	„	кумовьн
сынъ ,	որդի	„	сыновьн.

Չորս վերջին բառքը, որ շեչտը պահում չեն արմատական վանկի վերայ, յարն. սեռականում ունին ըն (փոխանակ ԵՅՎ, ինչպէս միւսերը), զոր օր. князьн, князѣн, князьнмъ և այլն:

դ, յարն. սեռականը կերպաւորումէ

1, իբրն Են (փոխանակ օՅՎ) ի մէջ жъ, чъ, шъ, щъ, վերջաւորութեամբ բառերի, զոր օր. ножъ, դանակ, յարն. սեռ. нождѣн; Ивановичъ—чеѣн; ландышъ—шеѣн; товарищъ—щеѣн.

2. ы (փոխանակ օՅՎ) ի մէջ բառերիս

алтынъ , *	ալտին (զահեկան)	разъ ,	անդամ
аршинъ ,	արշին	рѣкрутъ ,	նորրնծայ զինուոր
волосъ ,	(յարն. սեռ. волѣсъ)	рогъ * ,	եղջիւր
	հեր, մաղ	сапѣгъ * ,	կօշիկ
глазъ ,	աչք	солдатъ ,	զինուոր, սօղատ
гренадѣръ ,	զրենաղեր	тѣрокъ ,	թուրք, տաճիկ
драгѣнъ ,	զրազրւն	человѣкъ ,	մարդ
пудъ *),	պուդ	чудѣкъ ,	երկայն գուրպ.

Աստղիկովս \*) նշանակած բառերը հորովվումնն և կանոնաւորապէս. և, Այլն խտտորվումնն կանոնից, և յատկապէս եզականում, բառերս путь, ճանապարհ. Господъ, աէր աստուած. Христѣсъ, Քրիստոս.

Ուղղ.	путь,	Господъ	Христѣсъ
Սեռ.	пути	Гѣспода	Христѣ
Տրակ.	пути	Гѣсподу	Христѣу
Հայց.	путь	Гѣспода	Христѣ
Գործ.	путѣмъ	Гѣсподомъ	Христѣмъ
Նախ.	на пути	о Гѣсподѣ	о Христѣ.

Господъ, Христѣсъ կաղմուսնն այլ ևս առանձին կոչական հորովներ. Гѣсподи! Христѣ! սոյնպէս և Богъ, Сынъ, Царъ, որ կրօնական լեզուախօսութեան մէջ կաղմուսնն կոչական ձեերս Боже! Сыне! Царѣ!

Յգրնականի մէջ խոտորվումն

господи́нь, տէր, — յոգն. ուղղ. Господà, սեռ. господѣ, արակ. господамъ և այլն.

хозяйинъ, տանուաէր, хозяйева, хозяйевъ, хозяйевамъ.

шуринъ, աներձագ, — шурья, шурьевъ, шурьямъ.

чѣртъ, սատանայ — чѣрти, чертѣй, чертямъ.

сосѣдъ, գրացի — сосѣди, сосѣдей, сосѣдамъ,

холодъ, սորուկ, ծառայ — холоди, холодеи, холодиямъ.

Բառս քոլճեն, կէսօր, ունի սեռականում քոլճու, արականում քոլճու և այլն. նոյնպէս վանկս քոլ ի մէջ իգականասեռ բառիս քոլճու, կէս գիշեր, սատանուէ ք սեռական և միւս հոլովներում եզակի և յոգնակի թուերի մէջ:

5. Իբրև լրագործութիւն § 13, ծանօթ. 1 սեռականի մասին աւանդած կանոնի, թող լինի այս.

ա, շնչաւոր էակներով հասկանալի և անձների և անասունների անուններ, այնպիսի առարկաների անուններ առհասարակ, որ ոչ միայն կենդանի են, այլ և իւրեանց կացութիւնը ազատօրէն կարող են տեղափոխել:

բ, Հաւարական անունները հայցականում ֆշ հաւասար են ուղղականին, զոր օր. люди, котѣмъ говорятъ однимъ языкомъ, составляютъ одинъ народъ: Այլ անշունչ առարկանների անունակցութիւնը, եթէ դոքա փոխ էին առած շնչաւորներից, հոլովվումն այնպէս, որպէս թէ նշանակումէին շնչաւոր առարկայք, և անդրազարձարար. զոր օր. наипшій числителя дрѣби, գրիъ դուինà կոտորակի համարողը. между гостями я замѣтилъ и знакомыя лица, հիւրերի մէջ ես նկատեցի և ծանօթ անձինք. բայց բառս ыдолъ, կուռք հոլովվումէ իբրև կենդանի առարկայ:

XXXII. Անգիր ուսանելի բառեր և առաջարկութիւնք վասն թարգմանութեան.

замокъ ,	ամրոց	Англія ,	Անգլիա
замѣкъ ,	փականք	хйщиний ,	չափշտակիկ
дворецъ ,	ապարանք	смѣлый ,	համարձակ
подготъ , я,	կողմնգ	стойтъ ,	(ներկայ стоѣ)
огднь , я,	կրակ		կանգուն լինել
орѣль ,	արծիւ	ппадàтъ на	կոգѣ, մինի վերայ

յարձակութիւլ.

камень, я,	քար	назывàтъ	(հայց խնդրով սեռի
сучѣкъ ,	փոքրիկ սառ	և գործ.	խնդրով բնութեան),
владѣлецъ ,	կալուածատէր	անուանել,	կոչել.

(1.) Скѣлько локтѣй сукна въ этомъ кускѣ?—На пальцахъ руки и ногъ суть ногти.—Съ огнемъ будьте осторожны!—Мы дѣлаемъ дѣри съ замкомъ.—Замки и дворцы говорятъ намъ ещё о сильныхъ владѣльцахъ своихъ.—Орлы сильнѣе и смѣлѣе всѣхъ хйщныхъ птицъ; они нападаютъ нерѣдко на овецъ, зайцевъ и другихъ животныхъ.—Сила львовъ очень велика.—Между сучками дѣрева, которе стояло у самаго ручья, летали воробьи.—Кому неизвѣстно прилежаніе муравьевъ?—Въ Англіи весьма уважаютъ храбрыхъ бойцовъ.—Камни и металлы суть самыя тяжѣлыя тѣла.—Люби отца своего и исполнйи все его желанія!

Աշխատատէր եղիք որպէս մրջինքը.—Մի խաղացէք մատներով.—Չորս կանգունը կազմումն երեք արշին.—Ամրոցների և պալատների մէջ ոչ միշտ ապրումն երջանիկ մարդիկ.—Մարտնչողքը վտահութեամբ յարձակվումն թշնամու վերայ.—Չուրը այս վտակի մէջ է ականակիտ և պաղ.—Թռչունքը շինումն իւրեանց բոյները կէս մի հողի վերայ, կէս մի ծառերի ստերի վերայ, և կէս մի, զոր օրինակ ճնճղուկները, տանիքների ներքոյ.—Կապիկները պաշտպանումն իւրեանց անձը քարերով.—Աղուէները սիրումն կերակրուիլ նապաստակներով և միւս փոքրիկ անասուններով.—Արծիւները կոչվումն թագաւորք թռչունների, իսկ առիւծները թագաւորք շնչաւորների.—Ամենամեծ առիւծքը ունին ութից մինչև ինն ստնաչափ երկայնութիւն (§ 24, III.) և չորսից մինչև հինգ ստնաչափ բարձրութիւն.

XXXIII. Անգիր ուսանելի բառեր և առաջարկութիւնք վասն թարգմանութեան.

христiанинъ ,	քրիստոնեայ	басня ,	առակ
дворянинъ ,	ազնուական	ремесло ,	արուեստ
крестьянинъ ,	չինական	молодой ,	մանուկ
татаринъ ,	թաթար	звѣтный ,	երեկի
ягнѣнокъ ,	ղառն	подвластный ,	հպատակ
жеребѣнокъ ,	քուրակ	государственный ,	թագաւորութեան
Англичанинъ ,	Անգլիացի	притѣснѣтъ ,	հարստահարել
слѣжба ,	պաշտօն	большею частью ,	ըստ մեծի մասին
народъ ,	ժողովուրդ	нѣкогда ,	երբեմն.

(2—3.) Обитатели Еврoпы и Амeрики суть бoльшeю чaстью христiанe.—Знатнѣйшіе дворяне, которые нѣкогда въ Россіи занимали первыя мѣста въ государственной службѣ, назывались боярами.—Торговля Россіи съ Англичанами была очень важна и выгодна для тѣхъ и другихъ.—Сила Татаръ бoлѣе двухъ вѣкoвъ притѣсняла Россію, а нынѣ Татары эти подвластны Россіи.—Мѣщане занимаютъ бoльшeю чaстью ремеслами.—Читайте бaсно о крестьянахъ и рѣкѣ!—По улицамъ деревни бѣгали агнѣта вмѣстѣ съ телѣтами.—Число лошадей и жеребятъ мнѣ неизвѣстно.—Медвѣжата человеку не опасны.

Ուստատանին հարսակ են մինչև երկու միլիոն թաթարք.—Իշտողը վրաս էր առ իւր Բոյնարքը.—Թագաւորը դովուսէր իւր քաջ մարտնչողքը.—Մարդիկ (տղաք), աշխատեցէք աւելի ծրածան.—Այս երկիրները պատկահասունն Անգլիացոց.—Քաղաքների մէջ բնակումն ազնուականք և քաղաքացիք, իսկ գիւղերի մէջ շինականք:—Մանուկ ոչխարները սովումն գաններ, իսկ մանուկ ձիերը—քուրակներ.—Որթերի և միւր և կաշիքը օգտակար են մեզ:

XXXIV. Անգիր ուսանելի բառեր և առաջարկու թիւնք վան

Թարգմանու թեան.

табакъ ,	թամբարու	правый ,	աջոյ
чай ,	թէյ	лѣвый ,	ձախոյ
трубка ,	ծխափող	голубой ,	կապտագոյն, երկնագոյն
чашка ,	բածակ	крутой ,	զառի վեր, զառ ի վայր
торговый ,	վաճառաշահական	родной ,	հայրենական, հարազատ
старый ,	հին, ձեր.	мѣнять, (на что) փոխանակել մի բանի	հետ.
предлагать ,	առաջարկել		

(4. ա, բ, գ.) Въ моей чашкѣ чаю ещё нѣтъ сахара.—Онѣ предлагаютъ намъ трубку табаку.—Говорили, что на балу было мало народу.—Братья часто играли съ сыновьями князя.—Въ саду ещё много снѣгу.—Берега рѣки очень круты; на правомъ берегу лежатъ богатые сѣла, а на лѣвомъ видны лѣса и луга.—Мы охотно посѣщаемъ чужіе края.—Жизнь въ краю родномъ между друзьями весьма пріятна.—Въ нашей комнатѣ дѣжина стѣльевъ.—На сучьяхъ деревъ ужъ видны плоды.—Молодые князья служатъ въ томъ же самомъ полку, въ которомъ служилъ отецъ ихъ.—Братья часто говорятъ, когда друзья молчатъ.—Не мѣняйте старыхъ друзей на новыхъ пріятелей!

Ահա թէյ, բայց առանց չաքարի.—Անտառի մէջ կանգուն են ծառեր խորին ձիւնի մէջ. հաս ճանապարհի վերայ կայ դեռ ևս շատ ու շատ

(очень много) ձիւն.—Ծխափողի մէջ շատ սահաւ թամբարու կայ.—Ո՞ր դօրախմբի մէջ ծառայումն ձեր եղբայրքը.—Մեր բարեկամքը կանգնած էին կամրջի վերայ և նայումէին այս գեղեցիկ աշխարհի անտառների և մարգղեկախների վերայ.—Իշխանի մասին ոչինչ լսած չեմ.—Ձեր որդիների բարեկամների հետ պարահանդէսումը խօսեցի ևս.—Գու ունիս կապտագոյն աչեր.—Մեր լսեցիները զանազան ձայներ:

XXXV. Անգիր ուսանելի բառեր և առաջարկու թիւնք վան  
Թարգմանու թեան.

ландышъ ,	մայրսեան ծաղիկ	душа ,	հոգի
богачъ ,	հարստական	покойникъ ,	ննջեցեալ
лучъ ,	ճառագայթ	блескъ ,	փայլուն
товарищъ ,	ընկեր	зѣркало ,	հայելի
нужда ,	կարիք	купюи ,	ժլատ
битва ,	պատերազմ	радостный ,	ուրախացող
стрѣить къ битвѣ ,	ճակատ յարդարել	веселый ,	ուրախ, զուարճ
		солнечный ,	արեգակնային
числитель ,	համարող	уклоняться отъ чего ,	խտարախլ, խոյստալ մի բանից
знаменатель ,	նշանակող	провождать ,	(ներկայ ևս) ընթացակցիլ.
зѣнахъ ,	հոտ		
слуга ,	ծառայ		

(4. գ, ե, —5.) Все ѣ любятъ зѣнахъ ландышей.—Блескъ солнечныхъ лучей вреденъ для глаза, особенно весной.—Около полудня очень жарко.—Жизнь скуныхъ богачей весьма печальна.—Въ каждомъ полку тысяча человекъ солдатъ.—Вотъ человекъ безъ чулокъ и сапогъ.—Этотъ работникъ былъ у разныхъ хозяевъ.—Знатные господа имѣютъ много слугъ; напротивъ того весьма часто одинъ слуга служитъ двумъ, трѣмъ господамъ и бoлѣе.—Ты смотришь только на числителя и забываешь знаменателя дроби.—Добрые сосѣди провожаютъ покойника.—Вожь стрѣить полки свои къ битвѣ.—Кто изъ васъ знаетъ все европейскіе народы?—Люби гoспода Бога всею сeрдцемъ и твоего ближняго, какъ самогo себя!—Никогдa не уклоняйся отъ прамого пути добродетели!

Ուստական լիզվում կոչականի հետ միասին կան եօթն հորովք.—Մի կեանք առանց սերախուժեան և բարի ընկերների կեանք չէ.—Ձեր ծառայի պատմելովք այն պարոնների այգում կան շատ մայրսեան ծաղիկներ.—Ծա-

ուերի մեծ ոստերը պաշտպանումն մեզ արեւի ճառագայթների երեսից (отъ). — Նայեցէք տղաների ուրախ բազմութեան վերայ. — Քաջ զօրավարքը խոյս տուեցին կռուից, որովհետև ունէին շատ սակաւ սուղատք. — Տաճիկների և Թաթարների թիւը աւելի մեծ էր քան թէ Ռուսերի թիւը. — Ճանապարհակից եղէք երկրքին սուղաաներին ուղիղ ճանապարհով մինչև վտակը. — Խօսեցէք ինքեանքդ անբաղդ տանուտէրանց հետ. — Երբ այգեպանը վաղուց արդէն զրկուած է հերքից. — Տղան զիտէ նշանակողը, բայց ոչ համարողը կոտորակի:

Հարստականների սիրտը շատ անգամ դարձուցանում է երեսը աղքատների կարօտութենից. — Ոմանց պարոնների հպարտութիւնը աւելի մեծ է քան թէ նոցա խելքը. — Աչքը է հոգու հայելին. — Տէր Աստուած մեր, սրպէս մեծ են քո գործերը.

§ 37. Ծանօթութիւնք իդականանաւո զոյականների հոլովման մասին.

1. *Իդականքս* любовь, սէր, церковь, եկեղեցի, рожь, հիւսիսացորեան, ложь, ստուծիւն, вошь, սջիւ—գուրս են ձգում օ տառը սեռականում և միւս հոլովներում, բաց ի եզակի հայցականից և գործիականից. որպէս տեսանելի է յետագայ օրինակներից.

	Եզակի.	Յոքնակի.	Եզակի
Ուղղ.	любовь	цѣрковь	рожь
Սեռ.	любови	цѣрквѣи	ржи
Տրակ.	любви	цѣрквѣамъ	ржи
Հայց.	любовь	цѣркви	рожь
Գործ.	любовью	цѣрквѣами	рѣжью
Նախ.	о любви	о цѣрквѣи	о ржи.

Ծանօթութիւն. Любовь իբրև յատկանուն (Պանացի) հոլովվում է կանոնաւորապէս. ուրեմն սեռ. և տրակ, Любовь, և այլն.

2. Այլև անկանոնապէս հոլովվում են բառերս мать (փոխանակ матери), մայր, дочь (փոխանակ дочери), զուտոր, сажень, ձող—3 արշինի.

	Եզակի.	
Ուղղ. և Հայց.	мать	дочь
Սեռակ. և Տրակ.	матери	дочери
Գործ.	матерью	дочерью
Նախադր.	о матери	дочери

Յոքնակի.

Ուղղ.	матери	дѣчери	сажени
Սեռ.	матерѣи	дѣчерѣи	саженѣи (сажень և сажень)
Տրակ.	матерѣмъ	дѣчерѣмъ	саженѣямъ
Հայց.	матерѣи	дѣчерѣи	сажени
Գործ.	матерѣми—ьми	дѣчерѣми	саженѣями
Նախ.	о матерѣхъ	дѣчерѣхъ	саженѣяхъ.

3. Այլ և խոտորվում են ընդհանուր կանոնից և յատկապէս ա, Յոքնականում առհասարակ բառս кѣрица, հաւ—յոքն. кѣри, курѣта, курь, курѣтъ, кѣрамъ; кѣрица, վառեակ, հոլովվում է կանոնաւորապէս.

Բ. Յոքն. սեռականում ընդունում են ей  
 1. բառեր վերջաւորութեամբս ья (չեչաով). զոր օրինակ, статья, жоړուած,—յոքն. սեռ. статѣи.—Բառեր վերջաւորութեամբս ья (առանց չեչաօի) յոքն. սեռականում ունին ьи. զոր օրին. гѣстѣя (հիւր կին), кѣльѣя, խուց—յոքն. սեռ. гѣстѣи, кѣлѣи.  
 2. բառեր վերջաւորութեամբս жа, ча, ша նախընթաց բաղաձայնով և վերջավանկովս ща, որպէս և ля, нѣ, рѣ. զոր օրին. возжа, սանձ, յոքն. սեռ. возжѣи  
 вѣкша, սկիւռ, ,, ,, вѣкшѣи  
 бронѣя, գրահ ,, ,, бронѣи

Այլ և արականքս ѣпоша, պատանի, паша, փաշա, дѣя, հօրեղբայր, քեռի, ունին յոքն. սեռակ. ѣпошѣи, пашѣи, дѣѣи.

3. Բառեր վերջաւորութեամբս ня յառաջընթաց բաղաձայնով (և կիսաձայնով) յոքն. սեռականում ստանում են կրճատ վերջաւորութիւնս ѣ (փոխանակ ь). զոր օրին. башня, աչտարակ, спальня, ննջարան, бѣспя, առակ. пѣспя, տաղ, երգ. յոքն. սեռ.—башенѣ, спаленѣ, бѣсенѣ.

Ծանօթ. փոխանակ ѣю ընդունում են ью եզակի գործիականում իդակաւնասեռ անուններ ь վերջաւորութեամբ (մանաւանդ վսեմ ոճի մէջ), այլ և քանի մի իդականք ь վերջացած, յոքնակի գործիականում կրճատում են վերջաւորութիւնս ями զէպ ի ьми, զոր օրինակ (բաց ի мать և дочь բառերի մէջ), лошадыми, дверьми, (հանդերձ լիակատար ձեւերովս лошадыми և дверьми).

XXXVI. Անդիր ուսանելի բառեր և առաջարկութիւնք վան թարգմանութեան.

памятник , յիշատակարան	роща , ծառատան
колокольня , դանդակատուն	доля , մասն
украшение , զարդարանք, զարդ	золотникъ , զօլօտնիկ
надѣжда , յոյս	матѣрія , նիւթ
Надѣжда , կանայցի անուն	статуя , արձան
Рѣвель , я Րեվել	свинья , խոզ
Св. Олаѣ , սուրբ Օլայոս	шерстяной , բրդեայ
сочинѣніе , շարագրած	обработывать , Վակել
вѣтеръ (вѣтръ) , հողմ.	непріятельскій , թշնամական, թշնամու
судья , դատաւոր	утверждаѣть , հաստատել, պնդել
гость , հիւր	прославляѣть , փառաւորել, փառարանել
хлѣбъ , հաց	шитѣть , սնուցանել
	приготовляѣть , պատրաստել.

Съ любовью и надеждою мать смѣтрить на уснѣхи своей дѣчери.—Нынѣ цѣна на шерстяныя матеріи не такъ велика, какъ прѣжде.—Въ рощѣ мало змѣй, но много вѣкшей.—Сочинѣніе состоитъ изъ двѣнадцати статей.—Между дворомъ и цѣрковью лежить садъ; въ немъ пять статуй.—Сколько людей, столько судей.—Мы знаемъ вашихъ дѣдей.—Не одна добродѣтель украшаетъ сихъ юношей.—Фунтъ содержитъ въ себѣ девяносто шесть золотниковъ, а золотникъ столько-же долей.—Колокольня цѣркви св. Олаѣ въ Рѣвелѣ шестьдесятъ сажень вышиною; она выше всѣхъ колоколенъ ѳаго города.—Крестыяне держатъ коровъ, овечь, свиней, гусей, куръ и другихъ домашнихъ живѣтвыхъ, а лошадыи своими обработываютъ поля.—Изъ ржи мы приготовляемъ хлѣбъ.—Отъ полудня до полуночи двѣнадцать часѣвъ.—У Түрокъ много пашей.

Այս եկեղեցում կան շատ հին յիշատակարանք և դրօշներ զանազան թշնամի զօրագունդերի.—Ի վերայ հին ամրոցների պատուարներին (որմերին) տեսանելի են շատ աշտարակներ.—Մեր ունիւք սակաւ բարձր զանգակատուններ.—Շատ անգամ պնդումն թէ մայրերը դէպ ի իւրեանց որդիքը առաւել սէր ունին քան թէ դէպ ի ազջիկները.—Վտակները սպասաւորումն իրրե զարդ մեր մարգագեօրիներին և ծառատաններին.—Առաւել շատ սաստիկ էր հողմը կէս զիշերի մօտ (около).—Պարահանդէսում արական հիւրերի թիւը առաւել մեծ էր քան թէ իգականների թիւը.—Երկրքին տուների զաների մէջ դրած էր մի ընդարձակ

գաւիթ.—Ինչո՞վ են սնանում հաւերը և աղանիքը.—Լիւրովի ճակատագիրը աւելի լաւ էր քան Նաղեծղայի ճակատագիրը.—Հինգ հարիւր ձող կացուցանումն մի վերստ և իւրաքանչիւր ձող բաղկանումէ եօթն օտնաչափից.—Ի մէջ մի ուրբու կան 405 մասն մարուր արծաթ.—Եկեղեցիների մէջ մեր փառարանումնր Տէր աստուած.—

§ 38. Մանօթութիւնք չէզոք զոյականների հոյովման վերայ.

1. Բառեր վերջաւորութեամբս ще, ко, це (но), ընծայելով նիւթերին առաւել փոքրիկ քանակութիւն քան թէ սովորական է (—ուրեմն առաւելական կամ նուազական բառեր) յոքն, ուղղականում վերջանումն և կամ ы, բայց յոքն. սեռականում ունին վերջաւորուածքը ще — ей  
ко — ѣ  
це (но) цевъ (новь)  
զոր օրինակ, домѣще, մի անճոռնի մեծ տուն. յոքն. ուղղ. домѣщи. սեռ. домѣщей.  
колѣчко, փոքրիկ օղ. յոքն. ուղղ. колѣчки, սեռ. колѣчекъ.  
зѣркальце, փոքրիկ հայելի, յոքն. ուղղ. зѣркальцы, սեռ. зѣркальцевъ.

Նաև բառս соднице, արեղակն, ունի յոքնականում (բայ ի կանոնաւոր ձեւից содница) содницы, содницевъ նոյնպէս բառս сѣрдце նշանակելով բարկութիւն, յոքն. սեռականում կազմումէ, сѣрдцовъ, զոր օրին. сѣ сѣрдцовъ, բարկութենից.

2. Եւ (չեչտով) վերջացած բառերը յոքն. սեռականում յանգումն են զոր օրինակ, ружье, հրացան. յոքն. սեռ. ружей: Դորահակառակ եւ (առանց չեչտի) վերջացածքը ունին յոքն. սեռականում ьевъ, երբեմն և ии (ուր եւ դրած է փոխանակ іе), զոր օրին. платье, հանդերձ. устье, զետարերան, ущелие (ущелие), ծերպ—յոքն. սեռ. платьевъ, ыстьевъ, ущелий (չամիւմ. § 37, 3, բ, 1.)

3. Այլև խոտորվումն ընդհանուր կանոնից և յոքնակի ուղղականում ունին  
а, վերջաւորութիւնս и (փոխանակ а) բառերս ъблоко, խնձոր (յոքն. սեռ. ъблоковъ և ъблокъ), вѣко, սկանակալիѣ, плечѣ ուս.—Ово, ակն (վսեմ ստութեան մէջ), ѣхо, ականջ, ունին յոքն. ուղղականում ѣчи, ѣши. սեռ. очей, ушей և այլն.

բ, վերջաւորութիւնս ья (սեռ. ьевъ) բառերս вѣно, շղթայ, օղակ, крыло, թև, перѣ, գրիչ, шило, հերիւն, колѣно, փայտի շերտ: Дно, յատակ (մի-

անօթի) յորն, ուղղականում ունի донья и дни (սևո. донь) որպէս և բառս 3.0 չար.—злы (սևո. золь).

դ, небо, երկինք, чүдө, հրաշք, ունին յորնականում небеса, чудеса, սեռականում небось, чудесь և այլն.

4. բառս дитя, երեխայ, հորովումէ այսպէս

	Եզրակի		Յորնակի
Ուղղ.	дитя	Դ՛ԷԿԻ	դ՛էԿԻ
Սևո.	дитяи	Դ՛ԷԿԵՒ	դ՛էԿԵՒ
Տրակ.	дитяти	Դ՛ԷԿԻՄԻ	դ՛էԿԻՄԻ
Հայց.	дитя (այլև дитяю, дитё)	Դ՛ԷԿԵՒ	դ՛էԿԵՒ
Գործ.	дитятемь, (дитятею, այլև дитёю)	Դ՛ԷԿԵՄԻ	դ՛էԿԵՄԻ
Նախ.	о дитяти	Օ Դ՛ԷԿԻՅԻ	Օ Դ՛ԷԿԻՅԻ

XXXVII. Անգիր սերտելի բառեր և առաջարկութիւնք վասն թարգմանութեան.

мѣстечко ,	գիւղաբաղար	платье ,	հանդերձ
крѣпичко ,	փորրիկ թև	бабочка ,	թրթուր
колѣчко ,	փորրիկ օղ	множество ,	բազմութիւն
жилище ,	բնակարան	глубина ,	խորութիւն
помѣстье	ազարակ, կարուած	конь ,	տէղ, զեզարդն
южный ,	հարաւային	лавка ,	խանութ
нѣжный ,	քնքուշ	побѣчное солнце,	երկրորդական արեգակ
произрастать ,	աճել	и — и [թէ — և [թէ	

хотя, [թէպէտ, [թէև,

(1. 2.) Вотъ мѣстечки, въ которыхъ много старыхъ домищей.—Стекла сихъ зеркалацевъ не цѣлы.—Глубина ущелий горъ защищала враговъ отъ ружей и копей (և Կօփի) нашихъ войскъ.—Сколько помѣстьевъ около нашего города? У бабочекъ нѣжныя крѣпички.—Въ лѣсу произрастаетъ множество деревьевъ и деревцовъ.—Лисицы стрѣлятъ свой жилища въ землѣ.—Рѣка Волга около устьевъ своихъ не глубока.—Мы говоримъ обыкновенно только объ одномъ солнцѣ, хотя на небѣ бываеетъ много солнцевъ; эти солнца мы вообще называемъ звѣздами.

Խանութների մէջ տեսանելի են թէ մեծ և թէ փորրիկ հայելիք, օղեր, օղակներ, որպէս և (какъ и) բազմութիւն զանազան հանդերձների.— Ոմանք գիւղաբաղարներ շատ նշանաւոր են և առաւել նշանաւոր քան թէ

ինչ ինչ քաղաքներ. ճանապարհի վերայ դրած են շատ կալուածներ.—Մեր արեգակը շրջապատումն էրբեմն երկրորդական արեգակներ, որոց թիւը զանազան է.—Երկնքի վերայ կան շատ աստղեր.—Այս քնքուշ փորրիկ ծառերը աճումն միայն հարաւային աշխարհներում:

XXXVIII. Անգիր սերտելի բառեր և առաջարկութիւնք վասն թարգմանութեան.

творецъ ,	արարիչ	берѣза ,	սպիտակածառ, բերեզա
ангелъ ,	հրեշտակ	берѣзовый ,	բերեզեղան
слеза ,	արտօսք, եղ.	сосна ,	փեկոն
слѣзы ,	արտասուք, յորն.	сосновый ,	փեկոնեայ
печь ,	հնոց	заграничный ,	օտար աշխարհից բերած
дрова ,	(յորն, միայն) փայտ	закрывать ,	ծածկել, խփել
осель ,	էշ	засыпать ,	քուն մտանել, քնի մէջ ընկնել
сторона ,	կողմն	вездѣ ,	ամենայն տեղ

(3. 4.) Птицы вмѣсто рукъ имѣютъ крѣпья; тѣло ихъ покрыто перьями.—У осла плечи не очень широки, а уши длинныя.—Величина яблоковъ удивляетъ дѣтей.—У печи лежало нѣсколько поленьевъ берѣзовыхъ и сосновыхъ дровъ.—Дѣти закрываютъ вѣки и засыпаютъ.—Вездѣ насъ окружаютъ чудеса.—Слеза сйала въ очахъ ангела.—Награда добродѣтели на небесахъ.

Քս պատմութեան մէջ կան շատ հրաշքներ.—Օտար աշխարհից բերած խնձորները թէպէտ և աւելի թանկ են, բայց ոչ միշտ աւելի լաւ, քան թէ երեսը և ականջները.—Ինչպէս հայրն է, նոյնպէս են և զաւակները.—Ամպերի վերայ են երկինքը և աստղերը.—Մարդիկ շատ անգամ մոռանումն են թէ նոցա գործերի վերայ նայումն Աստուծոյ աչքը.

Ձուրը ամենայն կողմից շրջապատումէ կղզիքը.—Հօր և մօր եզրաբըր ասվումն քեռիք.—Եթէ դու ունին եզրաբըրներ բարեկամներ և բարի ընկերք, ապա յարգիր զնոսա և պահպանիր նոցա բարեկամութիւնը.—Թէ եկեղեցիներում և թէ անտառում և դաշտում (въ полѣ) զանազան ձայներ փառաբանումն երկնքի (небось) և երկրի արարիչը.— Ամենայն ժամանակներում (въ всяг. ինչորով) երկրի մի ժողովուրդը հարստա-

հարած է միւսը, և մարդիկ շատ անգամ պատերազմողի վայրենի քաջութիւնը գերադաս են արած քան թէ քաղաքացիների և շինականների օգտակար պարագմունքը:

### § 39 Պոյական անուններ երկտեսակ յոբնականներով:

Ռուս լեզվում կան ինչ ինչ զոյականներ, որ յոբնականում, բաց ի կանոնաւոր վերջաւորութենից, ունին և մի այլ, այսինքն *вѣ*, նաև (արական սեռում բաց ի *ы* և *и*) *а*, *я*։ Այդ երկու յոբնական ձևերից զարտուղին (վերջաւորութեամբս *вѣ*, *а*, *я*) ըստ մեծի մասին գործ է ածվում նշանակելու նիւթերի Էռվանքները (հասարարար)։ զոցա կարգին պատկանում են յետագայ բառերս։

<i>волосъ</i> , հեր,	<i>յոբն.</i>	<i>волосы</i>	{ սեռ. <i>волосъ</i> , ( <i>այլև</i> <i>волосовъ</i> )
<i>годъ</i> , տարի		<i>годы</i>	
<i>дерево</i> , ծառ		<i>дерева</i>	{ սեռ. <i>годъ</i> <i>годъ</i>
<i>домъ</i> , տուն		<i>деревья</i>	
<i>камень</i> , քար		<i>дома</i>	{ սեռ. <i>деревъ</i> ,, <i>деревьевъ</i>
<i>крукъ</i> , կեռ, ճանկ		<i>камни</i>	
<i>кучерь</i> , ձիավար		<i>камения</i>	{ <i>домовъ</i>
<i>лѣкаръ</i> , յ, բժիշկ		<i>крукы</i>	
<i>мастеръ</i> , արտեստապետ		<i>крукья</i>	{ <i>каменьей</i> <i>каменьевъ</i>
<i>писаръ</i> , յ, գրագիր		<i>кучеры</i>	
<i>уголь</i> , յ, ածուխ		<i>кучера</i>	{ <i>круковъ</i> <i>крукьевъ</i>
		<i>лѣкари</i>	
		<i>лѣкаря</i>	{ <i>кучеровъ</i>
		<i>мастеры</i>	
		<i>мастера</i>	{ <i>каменьей</i>
		<i>писари</i>	
		<i>писаря</i>	{ <i>кучеровъ</i>
		<i>угли</i>	
		<i>уголья</i>	{ <i>каменьей</i> <i>каменьевъ</i>

Աւելի էականապէս որոշվում են միմեանցից յոբնական ձևերը յետագայ բառերիս։

<i>зубъ</i> , առամն	— <i>յոբն.</i>	<i>зубы</i> , <i>зубовъ</i>	<i>зубы</i> , <i>зубевъ</i>	ատամները բերանում սանրի, սղոցի և նմանապիսի բաների։
<i>листъ</i> , թերթ, տերև		<i>листья</i> , <i>листвова</i>	<i>листья</i> , <i>листвева</i>	թղթի թերթեր ծառի տերևներ
<i>колѣно</i> , 1, ծունկն		<i>колѣни</i> , <i>колѣней</i>	<i>колѣна</i> , <i>колѣнъ</i>	ծառի տերևներ ծունկեր
			<i>колѣнья</i> , <i>колѣньевъ</i>	ազգի ցեղեր
				ազգի ցեղերի ծունկեր։
<i>корень</i> , <i>корня</i> , արմատ		<i>корни</i> , <i>корней</i>	<i>коренья</i> , <i>кореньевъ</i>	արմատք համեմային արմատք
<i>мужъ</i> , այր		<i>мужи</i> , <i>мужей</i>	<i>мужья</i> , <i>мужьевъ</i>	այրեր ամուսնաւոր այրեր
<i>мѣхъ</i> 1, փչողական փուք		<i>мѣхи</i> , <i>мѣховъ</i>	<i>мѣха</i> , <i>мѣховъ</i>	փչողական փուքք մուշտակի մորթիք
<i>небо</i> , քիմք		<i>неба</i> , <i>небъ</i>	<i>небеса</i> , <i>небесъ</i>	քիմք կրկինք
<i>небо</i> , կրկինք		<i>образъ</i> 1, <i>дѣ</i> , պատկեր	<i>образы</i> , <i>образовъ</i>	պատկերներ
			<i>образя</i> , <i>образевъ</i>	սուրբերի պատկերք
<i>судно</i> , 1, աման, անօթ		<i>судны</i> , <i>судень</i>	<i>суда</i> , <i>судовъ</i>	ամաններ, անօթներ նաւեր
<i>сынъ</i> , որդի		<i>сыны</i> , <i>сыновъ</i>	<i>сыновья</i> , <i>сыновей</i>	որդիք, այլբանական մտքով, որպէս որդիք ազգի, հայրենիքի, եկեղեցու։
<i>хлѣбъ</i> , 1, հաց		<i>хлѣбы</i> , <i>хлѣбовъ</i>	<i>хлѣба</i> , <i>хлѣбовъ</i>	որդիք, յատուկ մտքով հացեր։

\*) Յորենի տեսակք, որովհետև *хлѣбъ*, *ցորեան*, այս տեղ համարելի է իբրև անուն նիւթի, իսկ նիւթի անունը գործ դրուելով յոբնականում, սովորաբար նշանակում է ուսականում *нѣ-лѣ-нѣ-нѣ*, զոր օրին. *разныя вина и чай*, դանաղան տեսակք զինու և թէյի։— Սակայն երբեմն յոբնականը բացայայտում է միայն մեծ Էռվանքներ նիւթի, վասն որոյ *пески* (բառիցս *песокъ*, աւաղ) — բազմութիւն աւաղի, աւաղուտ տեղեր. *снѣга*, բազմութիւն ձիւնի, ձիւնապատ դաշտեր։

цветъ, 1, ծաղիկ,	цветы	} օվ	ծաղիկներ
2, դոյն,	цвета		դոյներ
черепа 1, սկաւառակ զլիւի,	черепы, череповъ,		զլիւի սակաւառակ
2, խեցքեկորք,	черепы, черепевъ,		խեցքեկորք
чудо, 1, հրաշք,	чудеса, чудеса,		հրաշքներ
2, հրէշ,	чуди, чудь, հրէշք, հրաշալի կենդանիք.		

XXXIX. Անդիր սերտելի բառեր և առաջարկու թիւեր վասն թարգմանութեան.

Сраженіе, կռիւ	Израиль, я, իսրայէլ
пила, սղոց	острый, սուր, բարկ
вѣтвь, ճիւղ	лѣдный, պղնձի
стебель, ստեղն	славный, փառաւոր
пища, կերակուր	извлекать, հանել
печаль, и (трауръ), սուղ.	вѣроитно, вѣрно, հաւանականաբար
драгоценный, մեծազին	всего, առհասարակ
драгоценный камень, պատուական, ազնիւ քար	не только—но и, ոչ թէ միայն—այլև

На дворѣ лежало много каменьевъ.—Царьичино платье покрыто драгоценными камнями.—Дерево держится въ землѣ корнями своими.—Какіе цветы тебѣ пріятнѣе всего?—Въ марьиной книгѣ всего двѣсти листовъ.—Мы употребляемъ въ пищу разныя коренья.—Деревья въ лѣсахъ ещё безъ листовъ.—Въ одномъ только братиномъ саду произрастаютъ такіе цветы.—Въ моряхъ есть много такыхъ чудь, о которыхъ мы ничего не знаемъ.—Стебли нашихъ хлебовъ имѣютъ нѣсколько колѣньевъ.—Израильскій народъ состоитъ изъ двѣнадцати колѣнъ.

Այլ թէ միայն կղմինարներով, այլև պղնձի և երկաթի թերթերով ծածկումնք միք տանիքները (крыши домовъ).—Մասերի ճիւղերի վերայ կան սերկներ և ծաղիկներ.—Սպիտակը և սևը են սղի դոյներ.—Այս սղոցի տառանները շատ սուր են.—Քանի առաններ ունի մարդս.—Այն տեղ կանգնած էր ոչ թէ մի նաւ, այլ բազմութիւն զանազան տեսակով և մեծութեամբ նաւերի.—Այս թուերից հանումնք միք քառակուսի արմատը.—Հացերը, որպէս հաւանական է, կը լինին այն պղնձի ամանների մէջ.—Մեր չինք խօսում ծովերի հրաշքների, այլ հրաշալի չնչաւորների վերայ.—Սուրբերի պատկերների առաջև ծունր էին խոնարհեցրած (стояли на колѣнахъ.)

վատարագները.—Արքը սիրումին իւրեանց կանայքը և կանայքը յարգումն իւրեանց արքը.—Ամոգիրը երկնքի վերայ ընդունումն զանազան գոյներ և ձևեր, որ նոյնպէս փոփոխական և անցաւոր են, ինչպէս նոքա ինքեանք. Այս հօշակաւոր այր մարդիկը էին ամենահաւատարիմ որդիքը իւրեանց հայրենիքի.

§ 40. Մանօթութիւնք հայրանունական բառերի և Ռուսաց տոհմանունների և քաղաքանունների վերայ.

I. Ռուսը, վասն նշանակելու անձնը, բաց ի մկրտութեան անունից (крѣстное имя) և տոհմանունից (фамилія կամ прѣзвище), զորք է ածում և հօր անունը (отчественное կամ отчество):—Այս հայրանունները ածանցվումն հօր մկրտութեան անունից (նորա սեռականից) և վերջանումն

- 1, ОВИТЬ (արակ.), ОВНА (իգական), էթէ հօր անունը վերջանումէ տառովս ъ. զոր օրին. Івановичъ, Յովհաննու որդի, Івановна, Յովհաննու դուստր (բառիցս Іванъ): Միայն Яковъ, Յակոբ, ունի Яковлевичъ, Яковлевна.
2. еВИТЬ, еВНА, երբ հօր անունը վերջանումէ կիսաձայնովս ѣ. զոր օրին. Николаевичъ, Նիկոլայովի որդի, Николаевна, Նիկոլայովի դուստրը (բառիցս Николаѣй):—Միայն иѣ յանգաւորուած անունները ունին ևевичъ, ևевна. զոր օրինակ, Григорій, Գրիգոր, —Григорьевичъ, Григорьевна.
- 3, иТЬ և иНИНА, երբ հօր անունը վերջանումէ տառովս а, я. զոր օրին. Кузьмичъ, Կուզմայի որդի, Кузьминина, Կուզմայի դուստր (անունիցս Кузьма, Կուզմա, Կամա. Ильячъ, Եղիայի որդի, Ильинина, Եղիայի դուստր (անունիցս Илья, Եղիա):

Մանօթութիւն. Այս կարգիս պատկանումն և царь, король (արքայ) բառերից ածանցուածքս царевичъ, королевичъ, արքայազն, թագաւորազն, արքեւն, королевна, արքայադուստր. նոյնպէս поповичъ, поповна, որդի, դուստր քահանայի (բառիցս поповъ, պապոս):

Հորովման մէջ հայրանունները չեն խոտորվում միւս գոյական անուններից.

II. Ռուսաց տոհմանունը և քաղաքանունը վերջաւորութեամբքս овъ, евъ, инъ, цынъ, скій, ккій (սոցա վերայ յաւելանումն և ово, ево, ино, цыно վերջաւորուած քաղաքանուններ և գիւղանուններ) վերաբերական ածականների հետ ունին հաւասար ծագումն և հորովվումն նոյնպէս, որպէս նոքա, թէ արականասեռ և թէ իգականասեռ գոյականները. միայն թէ



ն վերջացածք եղակի նախադրականի մէջ, փոխանակ ածական յանդուր-  
բութեանն омы, ընդունումն զոչական վերջաւորութիւնս է զոր օրին, чи-  
тають о Суворовѣ, ընթեանումն Սուվորովի մասին. նմանապէս, նախադր-  
հորովի մէջ ստանումն է քաղաքանունները և դիւղանունները է և օ վերջա-  
ւորութեամբ. զոր օր. сражались при Бородинѣ, կռիւ կար Բորոզինոյի մօտ:  
Այլ և հորովումն ուստական աղգանուններ ծի վերջաւորութեամբ, բայց  
արական սեռով միայն. վասն որոյ графъ Толстой, կոմսъ Соусовой, սեռ. графа  
Толстого և այլն: Սորա հակառակ, графиня Толстой կոմսուհի Соусовой, սեռ.  
графини Толстой. և այլն.

Մանթ. Քաղաքանունների մէջ հորովումն բոլորովին իրրե գոյականք.  
Нековъ, Гдовъ, Гостовъ, Киевъ, Орловъ, Харьковъ.

XI. Անգիր ուսանելի բառեր և առաջարկութիւնք վասն  
Թարգմանութեան.

Михайлъ ,	Միքայէլ (հասարակ կիրա- սութեան մէջ Михайло, Ми- хаила)	Ломоносовъ ,	Լոմոնոսով
Александръ ,	Ալէքսիոս	Дашковъ ,	Գաշկով
Федоръ ,	Քէտորոս (հասար. կիրա- սութ. մէջ Фёдоръ, Фёдоръ)	Меншиковъ ,	Մենշիկով
Давидъ ,	Գանիէլ (հասարակ կիրառ. մէջ Давидо, Давида)	Шуваловъ ,	Շուվալով
Василь ,	Բասիլիոս (սեռ. Василий, հասարակարար Василья)	Нарышкинъ ,	Նարիշկին
Романъ ,	Ռոմանոս	Милославскій ,	Միլոսլավսկիյ
Марія ,	Մարիամ (հասարակարար Марья)	императрица ,	կայսրուհի
Екатерина ,	Կաթարինէ (հասարակարար Катерина)	престоль ,	արքայական գահ.
Наталія ,	Նատալիա	особа ,	անձն
Кирилъ ,	Կիրիւզ	княгиня ,	կշխանուհի
		графъ ,	կոմս
		любителецъ ,	սիրական
		супругъ ,	ամուսին այր
		супруга ,	ամուսին կին
		покровитель ,	պաշտպան
		приближенный ,	մերձակոր
		отличать ,	(ներկայ օք) նախա- պահել առնել

Романъ — Романъ. Մի գոյական անուն, իրրե Ստորոգեալ զործ զրուած,  
быль бѣду, бѣдъ, այլն զորութեամբ հականալի есть բայի հետ, զրվումէ  
կրրեմն ուղղականով, իսկ կրրեմն զործիականով, այլնքն ուղղականով,

կրր նա նշանակումէ մի անկակից, աւելական բան. իսկ զործիականով,  
կրր ցուցանումէ մի պատահական, անցաւոր բան (—նր զիւրուածում նոյն  
իսկ օժանդակ բայս быль (бѣду, бѣдъ) նկատելի է իրրե ստորոգեալ). զոր  
օրին. Александръ Великій былъ сынъ царя Филиппа; Аристотель былъ настав-  
никомъ егѡ, Աղէքսանդր մեծը էր փիլիսոս թագաւորի որդին. Արիստոտելէս  
էր նորա դաստիարակիչը. будь (бѣдьте) мнѣ другомъ! Եղիւր, (եղիւր) ինձ  
բարեկամ. мой братъ (есть) учителемъ музыки въ двѣйчьемъ институтѣ. իմ  
եղբայրս երաժշտութեան ուսուցիչ է օրիորդական զպրոցումը:

Михайлъ Фёдоровичъ былъ первый царь изъ дома Романовыхъ.—Царь  
Петръ Алексѣевичъ (Великій) былъ сынъ царя Алексѣя Михайловича отъ вто-  
рой супруги его, царицы Наталіи Кирилловны Нарышкиной.—Первою супру-  
гою царя Алексѣя была царица Марія Ильиншна Милославская.—Бнязь Алек-  
сандръ Давидовичъ Меншиковъ былъ любимцемъ Петра Великаго, который  
егѡ часто называлъ Алексашею Давидичемъ, дитятемъ своего сѣрдца.—Междѹ  
приближенными особами императрица Екатерина Алексѣевна (Вторая) особенно  
отличала княгиню Катерину Романовну Дашкову.—Покровителемъ и другомъ знаме-  
нитаго Михайла Васильевича Ломоносова былъ графъ Иванъ Ивановичъ Шуваловъ.

XII. Անգիր ուսանելի բառեր և առաջարկութիւնք վասն  
Թարգմանութեան.

Юсифъ ,	Յովսէփ (հասարակ կիրառութեան մէջ, Осипъ.	Голлицынъ ,	Գոլիցին
Григорій ,	Գրիգորիոս	Орловъ ,	Օրլով
Іоаннъ ,	Յովհաննէս (հասար- ակարար, Иванъ)	Жукѡвскій ,	Ճուկովսկիյ
Андрѣй ,	Անդրէաս	Карамзинъ ,	Կարամզին
Сергій ,	Սարգիս (հասարա- կարար, Сергій)	Пушкинъ ,	Պուշկին
Анастасія ,	Անաստասիա	Ростопчинъ ,	Րօստոպչին
Грѡзный ,	Ահարկուն (մականուն ցար Յովհանն վասիլևիլի)	Полевѡй ,	Պօլևօյ
Румянцевъ ,	Րումեանցիվ	Ишимовъ ,	Իշիմով
Потѣмкинъ ,	Պօտեմկին	Крыловъ ,	Կրիլով
		Тарутино ,	Տարուտինօ (գիւղ)
		Саратовъ ,	Սարատով (քաղաք)
		стихотворецъ ,	բանաստեղծ
		Французъ ,	Ֆրանսիացի
		графиня ,	կոմսուհի





(—որոյ սեւը միշտ հետեւում անձնաւորութեան սեւին—) պատկանում են արձան սեւին, կթէ շնորհք են, իսկ շնորհքին, կթէ անշունչ առարկայք են. զոր օրին. бѣлый какадѹ. սպիտակ կակադու. инструментальное депо, զործիրի շահմարան. ցրոմкое ցրո, բարձրաձայն կեցցէ.

XLIII. Անգիր սերտելի բառեր և առաջարկութիւնք վասն թարգմանութեան.

Гёте ,	Գեթէ	Гёнуа ,	Գենուա
Шиллеръ ,	Շիլլեր	Парижъ ,	Պարիզ
Сёлли ,	Սելլի	Мартъ ,	մարտ
Роганъ ,	Բոհան	Юнь ,	Յունիս
Мольеръ ,	Մոլիեր	герцогиня ,	դքսուհի
Коцебѹ ,	Կոցեբու	путешественникъ ,	ուղևոր, ճանապարհորդ
Жёнии Линдъ ,	Ջենի Լինդ	игра ,	խաղ
Зонтагъ ,	Չոնթաղ	комедія ,	կատակերգութիւն
Грöбеккеръ ,	Գրրեկրքեր	пѣвица ,	երգեցիկ կին
Бордö ,	Բորդօ	колібри ,	կոլիբրի
Лондонъ ,	Լոնդոն	кòфе ,	ղահփէ
Рига ,	Րիգա	пальтö ,	պալտօ.
браво ,	քանք է զործի	встрѣчать, (ներկայ այ) հանդիպիլ,	
лѣтній ,	ամառնային		ընդունել.
грöмкій ,	բարձրաձայն	отправлѣться ,	ուղևորուիլ, ի բաց
урожденный ,	ծնած		երթալ

Բաղդաստութեան կանոն. Թուականը ռուսական լեզվում նշանակվում է 1700-ական զոր օր. Пётръ Великій родился 30-го Мая 1672-го года. Պետրոս մեծը ծնած է 30 ին մայիսի 1672 տարու: Բայց կթէ տարիթիւը զործ է անվում որպէս որոշումն ժամանակի, այնուհետև նա դրվումէ նախադրական հորվով նախորդս Ե. զոր օրին. Пётръ родился въ 1672—мъ годѹ. Պետրոս մեծը ծնեցաւ 1672 տարում:

Что вамъ извѣстно изъ сочиненій Гёте и Шиллера? Знаменитый Гёте скончался 22-го Марта 1832-го года.—Путешественники въ 1845—омъ годѹ были въ Влѹа, потомъ въ Парижѣ, а теперь отправлѣются въ Гёнуу.—Комедія Мольера гораздо лучше, нежели комедія Коцебѹ.—Герцогиня Роганъ была дочь великаго Сёлли.—О госпожѣ Зонтагъ все говорятъ какъ о славной пѣвицѣ.—Гöлосъ Жёнии Линдъ весьма прїятенъ,—Смотрите на этого колібри!

Вотъ вамъ чашка хорошаго кòфе! Въ немъ ещё нѣтъ сàхару.—Онѹ гулѣютъ въ лѣтнемъ пальтö, а онѹ въ лѣсней шубѣ.—Съ радостнымъ ցрö вöины встрѣчали своихъ храбрыхъ вождѣй.—Грöмкое браво было наградою игрö гослодїна Грöбеккера и госпожѹ Грöбеккеръ.

Այսպիսի ամառնային եղանակում մեր պալտօքը հարկաւոր չէն մեղ.— Ամերիկայում կան փոքրիկ թռչնակներ շատ, որ ասվում են կոլիբրի.—Գեթէի զործերի թիւը շատ մեծ է.—Գեթէին անակնունելի էր Շիլլերի այնպէս վաղածամանակեայ մահը. (ուսերէն—Գեթէն այնպէս վաղ սպասում չէր Շիլլերի մահուն).—Խօսումէին Կոցեբուի և նորա զործերի վերայ.—Կոմսուհի Բոսսին, ի ծնէ Չոնթաղ, է հռչակաւոր երգեցիկ կին.—Ո՛ւմ է պատկանում տունը, իշխանուհի Գոլիցինին, թէ կոմսուհի Կանկրինին, կամ թէ տիկին Պոլելոյին.—Մի նաւը ուղևորվումէ Գենուայց դէպի Լոնդոն, միւսը տակաւին Բորդոյումն է. աշնանը երկուքն ևս կը վինին Րիգայում.—1500 թուականին տակաւին ծանօթ չէին դահուէին, բայց տասնհեօթներերդ դարում արդէն զործ էին ածում զայն ամենայն տեղ:

XLIV. Անգիր ռուսանելի բառեր և առաջարկութիւնք վասն թարգմանութեան.

Իբրև կրկնութիւն.

количество ,	քանակութիւն	дерево ,	ծառ.
дубъ ,	կաղնի	здоровый ,	առողջ
стволь ,	բուն (ծառի)	значительный ,	նշանաւոր
кора ,	կեղև	крѣпкій ,	ամուր
кусть ,	թուփ	лѣсной ,	անտառային
кустикъ ,	թփիկ	доставлѣть ,	հասուցանել

Անտառ.

Մի նշանաւոր տարածութիւն հողի, որոյ վերայ զանազան ծառեր աճում են (—որոյ վերայ աճում են զանազան ծառեր) մեծ քանակութեամբ և մօտ միմեանց, ասվումէ անտառ: Ծառերը բաղկանում են արմատներից, բունից, ոստերից, հիւղերից և տերևներից: Արմատներով պահվումէ ծառը հողի մեջ, արմատը և ոստերը պատած են կեղևով: Ամենաստորական անտառային ծառերը կովկասում են ընկուզենին և կաղնին, և այս պատճառով այդ տեղ առաւել յաճախ պատահում են ընկուզենիքի և կաղնու անտառներ: Ծառերը շատ օգտակար են մեղ, որովհետև մեղ պատրաստում ենք

զոր օրին. ընկուզենու զեղեցիկ փայտից զանազան բաներ, սեղաններ, աթոռներ, զանազան անօթներ և այլն: Եղևնի և կաղնու ծառից մեր շինուածնք ոչ թէ միայն տուներ, այլ և նաւեր և միւս նաւարկութեան գործիք (суда): Բայ ի ծառերից ածուան անտառում և փոքրիկ ծառեր, թուփեր, սրպէս և խոնարհ (մեղմ ձեռով) տունկերի վերայ զանազան տեսակ հատկաւոր մրգեր, որ հասուցանուանն մեղ թէ թեթև ու հաճելի և թէ առողջ կերակուր:

### Երրորդ ընթացք.

Յաղագս Բայի (§ 5, 2.)

### § 43. Տեսակքը բայերի.

#### I. Բայերը բաժանութեանն

1. Չէրէք Բայեր (глаголы непереходящие—глаголы средние) որը ցուցանուանն մի գործողութիւն, որ դադարումէ գործող առարկայի մէջ (—առանց անցանկու զէպ ի միւսը), կամ թէ նորա որ և իցէ վիճակը. զոր օրինակ, птйца летает, թռչումը թռչումէ. рана болит, վէրը ցաւումէ. книги лежат на полу, գրեանքը կան յատակի վերայ:

